**ԷԼԼԱԴԱ ԼՅՈՎԱՅԻ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Արվեստի պատմաբան, Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի բակալավրական կրթության շրջանավարտ
E-mail: matevosyanellada875@gmail.com
Doi:10.58580/18290019-2023.2.65-16

Ղեկավար՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնի դասախոս,
արվեստագիտության թեկնածու Հռիփսիմե Էդուարդի Վարդանյանի երաշխավորությամբ

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 20.11.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 22.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 14.10.2023 թ.

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՅՈՒՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Ամփոփում

Արամ Խաչատրյանի կերպարն արտահայտությունն է գտել քանդակագործ Յուրի Պետրոսյանի արվեստում: Արդյունքում հոդվածագիրը եզրահանգության է գալիս, որ Յուրի Պետրոսյանը հասկանալով և խորը կերպով գիտակցելով Արամ Խաչատրյանի էությունը, փոխանցել է դա քանդակին վերստեղծելով նրա ամբողջությամբ իրականությանը շատ մոտ կերպարը: Եվ այդ հավերժացված կերպարով դիտորդները կկարողանան ընկալել մեծն կոմպոզիտորի ամբողջական էությունը: Եվ պետք է հաշվի առնել այն, որ Յուրի Պետրոսյանը մեծ հոգատարությամբ և նվիրվածությամբ է կատարել խնդրահարույց նպատակը:
Բանալի-բառեր. Յուրի Պետրոսյան, Արամ Խաչատրյան, կոմպոզիտոր, արձան, քանդակագործ, քանդակ, երաժշտություն, մանրաքանդակ, արվեստ, հուշարձան:

Abstract

Art historian, Bachelor's degree from the Faculty of History, Yerevan State University ***Ellada Levon Matevosyan- "Aram Khachaturian in Yuri Petrosyan's Art".***

The image of Aram Khachaturian has found its expression in the art of sculptor Yuri Petrosyan. As a result, the author concludes that Yuri Petrosyan, by deeply understanding and perceiving the essence of Aram Khachaturian, has conveyed this essence through the sculpture, recreating a highly realistic representation. Through this immortalized figure, viewers can grasp the complete essence of the great composer. It is important to note that Yuri Petrosyan carried out this challenging task with great care and dedication.
Key Words: *Yuri Petrosyan, Aram Khachaturian, composer, statue, sculptor, sculpture, music, miniature sculpture, art, monument.*

Абстракт

Историк искусства, бакалавр исторического факультета Ереванского государственного университета Эллада Левоновна Матевосян. - "Арам Хачатурян в искусстве Юрия Петросяна".

Образ Арама Хачатуряна нашел свое выражение в творчестве скульптора Юрия Петросяна. В результате автор статьи приходит к выводу, что Юрий Петросян, понимая и глубоко осознавая сущность Арама Хачатуряна, передал ее скульптуре, воссоздав его целостный образ, очень близкий к реальности. С этим увековеченным образом зрители смогут постичь целостную сущность великого композитора. Надо учесть, что Юрий Петросян с большим вниманием и преданностью осуществил поставленную задачу.
Ключевые слова: *Юрий Петросян, Арам Хачатурян, композитор, статуя, скульптор, скульптура, музыка, миниатюрная скульптура, искусство, памятник.*

Նվիրվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին

Յուրի Գուրգենի Պետրոսյանը ծնվել է 1941 թվականի հուլիսի 20-ին Երևան քաղաքում: Հայրը զոհվել է պատերազմում և նա չի տեսել հորը: Եվ ամբողջ կյանքի ընթացքում զգացել է նրա բացակայությունը:

Մեծացել է մոր հոգածությամբ: Քանդակի և նկարչության հանդեպ սերն առաջացել է շատ փոքր տարիքից: Սկզբնական շրջանում ավելի շատ զբաղվել է արտանկարչությամբ: Նրա առաջին քանդակը հետաքրքիր և տխուր պատմություն ունի: Պատի ծեփից փոքր բարելիեֆ է քանդակում և կախում լվացարանի մի հատվածում: Առավոտյան, երբ արթնանում է քանդակը չկար ընկել էր ջրով լի դույլի մեջ և հալվել: Եվ հենց դա էլ իր մեջ արթնացնում է շարունակելու և կրկին քանդակելու ցանկությունը: Հորեղբոր խորհրդով (ով սերտ կապեր ուներ արվեստագետների և մշակութային գործիչների հետ) ընդունվում է պիոներ պալատ, 2 տարի հաճախում է քանդակի դասերի: Այնուհետև ընդունվում է Գեղարվեստի ուսումնարան, որտեղ սովորում է 5 տարի: Նրա ուսուցիչներն են եղել Սուրեն Ազարյանը (Գայի հուշարձանի հեղինակը), Արա Սարգսյանը: Յուրի Պետրոսյանի խոստովանությամբ, Արա Սարգսյանը բախտորոշ է եղել նրա գործունեության համար, քանի որ նրա խորհուրդները՝ թե՛ մասնագիտական, թե՛ առհասարակ կյանքի վերաբերյալ ուղենիշ հանդիսացան իր համար (1.): Զրույցները վարպետի լսարանում, թե լսարանից դուրս արվեստի, կյանքի, մարդկային փոխհարաբերությունների շուրջ ամբողջ կյանքում ուղեկցել են Յուրի Պետրոսյանին: Ժանրային սահմանափակում չի ճանաչում նրա արվեստը: Նրա քանդակածավալը կենդանի է, շարժուն, ներքին էներգիայով օժտված:

Քանդակագործի ստեղծագործական կյանքում նշանակալի էր հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հուշարձանի մրցույթում առաջին մրցանակ շահելու փաստը: Մրցույթը չորս փուլից էր, և Յուրի Պետրոսյանին հաջողվում է ստանալ առաջին մրցանակ: Մրցույթից հետո երկար ժամանակ քանդակը չէր տեղադրվում, պետությունը միջոցներ չուներ ծրագիրն ավարտին հասցնելու համար: Քանդակագործն անցել է երկար ճանապարհ: Կոմպոզիտորի լուսանկարներից փորձել է քաղել հավաքականը և կարևորագույնն իր ստեղծագործությանը հաղորդել տիեզերական երաժշտության հեղինակի ուժեղ և միևնույն ժամանակ զգայուն կերպարը: Քանդակից բխող զորեղ ուժը՝ կոմպոզիտորի խրոխտ կերպարը, հստակ ընդգծված դիմագծերը, կենտրոնացած հայացքը, ձեռքերի և մարմնի դիրքն ասես լսելի են դարձնում կոմպոզիտորի ստեղծվելիք տիեզերական երաժշտությունը: Կոմպոզիտորը նստած դիրքում անգամ շարժուն է: Անդադար ստեղծագործող նրա կերպարում ասես միախմբված է իր ամբողջ կյանքի երաժշտական ժառանգությունը՝ մանկությունից եկող ազգային հարուստ կերպարը: Քանդակագործը նրբորեն ասես ի ցույց է դնում կոմպոզիտորի զերգզայուն գուցե նաև բռնկուն խառնվածքը: Յուրաքանչյուր ստեղծագործողի համար դժվար է գտնել հանճարեղ մարդու էությունն ու խառնվածքը բացահայտող բանալին: Դժվար է և միևնույն ժամանակ չափազանց պատասխանատու: Իր խոսքերում Յուրի Պետրոսյանը նշել է, որ անսահման մեծ սիրով է աշխատել քանդակի ստեղծման ընթացքում: Ինչպես նշում է արվեստաբան Պողոս Հայթայանը. «Նա կարողացավ ստեղծել խրոխտ, առնական, կենսալի ներաշխարհով մի անհատականություն, որն իր հայ-

Արամ Խաչատրյանի հուշարձանի բացումը 1999 թ.

The unveiling of the Aram Khachaturian monument in 1999

На открытии памятника Араму Хачатуряну (1999)

Հուշարձանի էսքիզներից է, որը Յուրի Պետրոսյանը նվիրել է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանին

One of the sketches for the monument, which Yuri Petrosyan donated to the Aram Khachaturian House-Museum

Один из эскизов памятника, который Юрий Петросян подарил Дому-музею Арама Хачатуряна

Արամ Խաչատրյանի դիմաքանդակը գտնվում է Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում

Aram Khachaturian's bust is located in the Tretyakov Gallery in Moscow

Скульптура Арама Хачатуряна. Третьяковская галерея, Москва

Նվիրվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին

Հուշարձանի էսքիզներից է, որը Յուրի Պետրոսյանը նվիրել է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանին

A sketch of the monument Yuri Petrosyan presented to the Aram Khachaturian House Museum

Это один из эскизов памятника, который Юрий Петросян подарил дому-музею Арама Хачатуряна

Սենիկ Գևորգյանի հետ. Լազարևսկ, 2008 թ.
With Senik Gevorgyan at Lazarevsk in 2008
С Сеником Геворкяном. Лазаревск, 2008

ռենի բնության պես կոթողային է ու վեհ և իր մեջ խտացնում է ժողովրդի երգ ու բանի խորհուրդն ու իմաստը» (2.)։

Եվ վերջապես, 1999 թ. մոսկվայաբնակ բարերար և Յուրի Պետրոսյանի լավ ընկեր Սենիկ Գևորգյանի հովանավորությամբ հուշարձանը տեղադրվեց։ Հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1999 թ. հուլիսի 31-ին, և մայրաքաղաքը հարստացավ մի հիասքանչ քանդակով։ Կոմպոզիտորը քանդակված է բազկաթոռ դարձած կենաց ծառին։ Հուշարձանի բարձրությունը 3.5 մետր է, նյութը՝ գրանիտ և բրոնզ։

Ճարտարապետը՝ Ռոմեն Մարտիրոսյանն է։

Այս քանդակի ստեղծումից հետո Արամ Խաչատրյանի կերպարը շարունակում է հուզել և հետաքրքրել քանդակագործին։ Ստեղծվում է Արամ Խաչատրյանի մանրաքանդակը, այստեղ ծնկերին բացված գիրքն է, հայացքը կրկին խրոխտ և մտազբաղ։ Մանրաքանդակը Յուրի Պետրոսյանը նվիրաբերել է մեծ կոմպոզիտորի տուն-թանգարանին (3.)։

Քանդակագործն ինքն Արամ Խաչատրյանի մասին ասել է «Նրա երաժշտությունը կարող է ստեղծել տարբեր տրամադրություններ և՛ սիրո, և՛ պայքարի, և՛ հավերժության։ Կոմպոզիտորը հավերժացավ իր երաժշտությամբ և քանի դեռ կա մարդկությունը, պետք է վայելի Արամ Խաչատրյանի չքնաղ երաժշտությունը» (1.)։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յուրի Պետրոսյանի անձնական արխիվը։
2. *Հայթայան Պ. Կ.,* Հայ կերպարվեստի կեսդարյա քրոնիկոն 1962-2014 թթ., Եր., Պրինտ-ինֆո, 2024 թ.։
3. *Յուրի Պետրոսյան,* Հայաստանի նկարիչների միություն, Երևան 2012։

Personal archive of Yuri Petrosyan.
Haytayan P. K., Half-Century Chronicle of Armenian Fine Arts 1962-2014, Yer.: Print-info, 2024.
Yuri Petrosyan, Artists' Union of Armenia, Yerevan, 2012.

REFERENCES

1. Personal archive of Yuri Petrosyan.
2. *Haytayan P. K.,* Half-Century Chronicle of Armenian Fine Arts 1962-2014, Yer.: Print-info, 2024.
3. Yuri Petrosyan, Artists' Union of Armenia, Yerevan, 2012.

Հեղինակի մասին. *ԷԼԼԱԴԱ ԼՅՈՎԱՅԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ (ծ. 23.12.2002 թ. գ. Աղնջաձոր ՀՀ, Վայոց ձորի մարզ)։ Սովորել է Երևանի պետական համալսարանի՝ պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում, բակալավրական կրթության 4-րդ կուրսում, դեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դասախոս Հռիփսիմե Էդուարդի Վարդանյան։ Ավարտական թեման է՝ «Յուրի Պետրոսյանի ստեղծագործությունը»։*

About the author: *ELLADA LYOVA MATHEVOSYAN (born 23,12, 2002, in the village of Aghnjadzor, Vayots Dzor Region, Armenia) is a fourth-year bachelor student at the Department of Art History, Faculty of History, Yerevan State University. Her graduation paper is titled "The Work of Yuri Petrosyan" (Supervisor: Hripsime Eduard Vardanyan, PhD in Art History, lecturer).*

Об авторе: *ЭЛЛАДА ЛЕВОНОВНА МАТЕВОСЯН (род. 23.12.2002 в Ахнджадзоре, Вайоцдзор, РА). Бакалавр 4-го курса искусствоведческого отделения исторического факультета Ереванского государственного университета. Дипломная работа на тему "Творчество Юрия Петросяна", руководитель - кандидат искусствоведения Рипсиме Эдуардовна Варданян.*